

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/3

20 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Հարություն Աղաջանյանի 25.09.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 28.08.2015 թ-ի թիվ 56-11 որոշման դեմ:

Ա/Ձ Հարություն Աղաջանյանի բողոքում բերված փաստարկները.

28.08.2015 թ-ին ընդունված «Հարկ վճարողի կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ» թիվ 56-11 որոշման ելակետային տվյալներում արտացոլված հարկային պարտավորությունների ժամանակահատվածը և թույլ տված հարկային օրենսդրության խախտումները Ա/Ձ Հարություն Աղաջանյանի կողմից չեն ընդունվում, քանի որ 1998 թ-ից դադարեցրել է անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը, ինչի կապակցությամբ հարկային մարմնի պահանջով ներկայացրել է համապատասխան դիմում: Սակայն հարկային մարմինը մինչ օրս գանձում չի իրականացրել, հաշվետվություններ չի պահանջել: Հետևապես անհասկանալի է, թե ինչու հանկարծ անակնկալ կայացվել է բողոքարկվող վարչական ակտը: Նշված ակտը ստանալուց հետո բողոքաբերը դիմել է Գորիսի ՏՀՏ Սիսիանի հարկային մասնագետին և պահանջել է դիմումի օրինակը, սակայն նա պատասխանել է, որ նման դիմում գոյություն չունի: Հարց է առաջանում, եթե դիմումը գոյություն չունի, ինչու հարկային մարմինը ոչ մի գործողություն չի իրականացրել: Հարկային մարմնի նման գործողությունները կասկածի տեղիք է տալիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ներկայացվում է սույն բողոքը:

Հարկային մարմնում, եթե ընդունենք, որ հաշվարկվել է բողոքարկվող որոշման հիմքում դրված հարկերը, ապա հարկային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար վարչական մարմինը պետք է վաղուց իր նախաձեռնությամբ հարուցեր վարչական վարույթ և իրականացներ գանձման գործընթացը, ինչը սակայն չի կատարվել:

Մինչև բողոքարկվող վարչական ակտի ընդունելը հարկային մարմինը երբևէ չի ծանուցել հարկային պարտավորությունների մասին: Այդ հանգամանքը կարելի է պարզել տարածքային հարկային տեսչության միջոցով:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի, 01.01.2013 թ-ից ուժը կորցրած «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի բովանդակությունից երևում է, որ հարկային և սոցիալական ապահովության պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե հարկատու և սոցիալական վճար վճարող հանդիսացող անձի կողմից թույլ տրված օրենսդրության խախտումը հարկային մարմնի կողմից հայտնաբերվել է այդ խախտումը կատարելու տարվան հաջորդող երեք տարին լրանալուց հետո:

Սոցիալական ապահովության վճարի պարտավորությունը, ըստ որոշման, առաջացել է 2006 թ-ի հունվարի 1-ից քարտի բացման օրվանից՝ 120.000 դրամի չափով, ինչպես նաև 2006 թ-ի հունվար ամսից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների կանխավճարների հաշվարկներից: Այստեղից էլ երևում է, որ սոցիալական վճարների կանխավճարները հաշվարկելիս յուրաքանչյուր ամսվա համար տեսչությունը հաշվարկել է տույժ, որպիսի փաստով հաստատվում է, որ հարկային մարմինը այդ պարտավորության գծով թույլ տված խախտումները /ապառքի չվճարումը/ հայտնաբերել է այն կատարելուց անմիջապես հետո մինչև երեք տարին լրանալը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69, 70-72-րդ և 76-րդ հոդվածների դրույթներով, բողոքաբերը

խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի 28.08.2015 թ-ի թիվ 56-11 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Հարություն Աղաջանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 28.08.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 440.369 դրամ, որից հաստատագրված վճարի գծով 69.000 դրամ (տուգանք), իսկ պարտադիր սոցիալական ապահովագրության գծով 371.369 դրամ (240.000 դրամ ապառք, 131.369 դրամ տույժ):

Հաստատագրված վճարի գծով պարտավորությունն առաջացել է 01.05.2002 թ-ից՝ քարտի բացման օրվանից, հիմք՝ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը:

Պարտադիր սոցիալական ապահովագրության գծով պարտավորությունն առաջացել է 01.01.2006 թ-ից՝ քարտի բացման օրվանից՝ 120.000 դրամ, ինչպես նաև հաշվարկվել է «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 28.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 56-11 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Հարություն Աղաջանյանից 440.369 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Հարություն Աղաջանյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը ուսումնասիրելով ՀՀ պետական ռեգիստրի կողմից 18.09.1998 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 016471 վկայականը (այսուհետ՝ Վկայական), պարզեց, որ քաղաքացի Հարություն Աղաջանյանը ՀՀ պետական ռեգիստրում որպես անհատ ձեռներեց գրանցվել է 18.09.1998 թ-ից: Ընդ որում, Վկայականում նշված է, որ այն ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Վկայականի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/Ձ Հարություն Աղաջանյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 31.12.1998 թ-ը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում Վկայականում, ինչպես նաև դրա ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Հարություն Աղաջանյանը 31.12.1998 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, ըստ էության, դադարել են Հարություն Հովհաննիսյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև հիմք ընդունելով այս հարցի կապակցությամբ Հանձնաժողովի ընդունած որոշումները, Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Հարություն Աղաջանյանի նկատմամբ նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ չեն կարող հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է Որոշմամբ հաստատագրված վճարի գծով գանձման առաջադրված պարտավորությանը՝ գումարով 69.000 դրամ, ապա հարկ է նշել, որ Որոշման մեջ է գտել վրիպակ: Մասնավորապես, 69.000 դրամի պարտավորությունը ոչ թե հաստատագրված վճարի գծով է, այլ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով նախատեսված տուգանքի գումար է, որն առաջադրվել է Սիսիանի ՏՀՏ կողմից 12.05.1998 թ-ին կազմված ստուգման ակտով: Ընդ որում հարկ է նշել, որ նշված ստուգման ակտը ստորագրված է Ա/Ձ Հարություն Աղաջանյանի կողմից:

Քննարկվող դեպքում վերոգրյալ ակտով առաջադրված տուգանքի նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների առաջադրման երեք տարվա վաղեմության ժամկետը կիրառելի չէ, հետևապես այն Ա/Ձ Հարություն Աղաջանյանի կողմից ենթակա է վճարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 28.08.2015 թ-ի թիվ 56-11 որոշումը:

2. ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետին.

Ա/Ձ Հարություն Աղաջանյանի վերաբերյալ կայացնել նոր որոշում՝ Սիսիանի ՏՀՏ 12.05.1998 թ-ի ստուգման ակտով արձանագրված տուգանքի գումարը գանձման առաջադրելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ